ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «27» 08 2024 թ. N 2178-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 1391-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մայիսի 27-ի «Ներդրումների եվ արտահանման խթանման ծրագրի 2024 թվականի միջոցառումները հաստատելու մասին» N 1391-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը՝

1) N1 Հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում «կազմակերպել հյուրասիրություն» բառերից հետո լրացնել «(սուրճի ընդմիջում, ճաշ, ընթրիք)» բառերը, իսկ «իրականացնել գովազդային նյութերի պատրաստում և տպագրություն» բառերից

հետո լրացնել «ձեռք բերել ավիատոմսեր, ծաղկեփնջեր և դրոշներ, համակարգիչներ, հեռարձակման և տեսանկարահանման, բժշկական, օդանավակայանում հյուրերին դիմավորման, տեղեկատվական կենտրոնի և սահմանի արագ անցման ծառայություններ, իրականացնել համաժողովը սպասարկող անձնակազմի ներգրավում, պանելային քննարկումների համար բեմահարթակների ձևավորում» բառերը,

2) N1 Հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «արվեստի կենտրոններ այցելությունները (մուտքի տոմս և գիդի ծառայություն) և տրանսպորտային փոխադրումները» բառերից հետո լրացնել «նվերները և հուշանվերները, գրենական պիտույքների հավաքածուները, էկո պայուսակները, տրանսպորտային ծառայություններ (ավտոբուսների և ներկայացուցչական դասի մեքենաների վարձակալություն)» բառերը,

2. N2 Հավելվածի 1-ին մասը լրացնել 9-րդ և 10-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝

1) «9) «Bazaar Berlin» դիզայներական միջազգային ցուցահանդես – նոյեմբերի 6-ից 10-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)»,
2) «10) «CPHI Middle East» դեղագործական միջազգային ցուցահանդես – դեկտեմբերի 10-ից 12-ը (Էր Ռիադ, Սաուդյան Արաբիա)»:

3. N 4 Հավելվածով հաստատված պայմանագրի՝

1) 2.4 կետի 2.4.2 ենթակետում «վճարումները» բառը փոխարինել «վճարումները*» բառով, իսկ էջի ներքևի անկյունում լրացնել «*Սույն կետը կիրառվում է ցուցահանդեսի կազմակերպչի կողմից սահմանված՝ ազգային տաղավարով մասնակցության դեպքում յուրաքանչյուր ընկերության գրանցման և այլ պարտադիր վճարումների պահանջի դեպքում» բառերը:

2) 5.1-րդ կետում «վեճերի լուծումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «վեճերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում» բառերով:

4. Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ ենթակետով.

«5) 2024 թվականին գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև համանման այլ միջոցառումների ցանկը՝ համաձայն N 5 հավելված»

5. Հրամանը լրացնել նոր 5-րդ հավելվածով՝ համաձայն Հավելվածի :

Invalid signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարի

2024 թվականի

27.08.2024թ.__-ի N_2178-Ա հրամանի

Հավելված N 5

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարի

2024 թվականի

___27__05___2024թ.__-ի N_1391-Ա հրամանի

2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ (ՖՈՐՈՒՄՆԵՐԻ), ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ապահովվել է մասնակցություն հետևյալ գործարար համաժողովներին, շնորհանդեսներին, ինչպես նաև համանման այլ միջոցառումներին.

1) Հայ և իրանցի գործարարների հանդիպումներ «IRANEXPO 2024» 6-րդ ցուցահանդեսի շրջանակներում -2024 թվականի ապրիլի 30 (Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն),

2) Հայ-ղազախական գործարար համաժողով- 2024 թվականի ապրիլի 9 (Երևան, Հայաստանի Հանրապետություն),
3) Հայ-հնդկական գործարար համաժողով- 2024 թվականի հունիսի 7 (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

2024 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսվում է ապահովվել մասնակցություն հետևյալ գործարար համաժողովներին, շնորհանդեսներին, ինչպես նաև համանման այլ միջոցառումներին.

1) Հայ-լիտվական գործարար համաժողով-սեպտեմբերի 9 (Վիլնյուս, Լիտվայի Հանրապետություն),
2) Foodex Saudi-2024» սննդի և ոչ ալկոհոլային խմիչքների ցուցահանդեսի շրջանակներում գործարար հանդիպումներ- սեպտեմբերի 16-ից 19-ը (Ռիադ, Սաուդյան Արաբիա),
3) «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» միջազգային համաժողով- սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը (Երևան, Հայաստանի Հանրապետություն),
4) Հայ-էմիրաթական գործարար համաժողով-հոկտեմբերի 9 (Աբու-Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ),
5) «Sial-2024» սննդի և խմիչքի միջազգային ցուցահանդեսի շրջանակներում գործարար հանդիպումներ- հոկտեմբերի 19-ից 23-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),
6) Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման ցուցահանդեսի շրջանակներում գործարար հանդիպումներ- նոյեմբերի 5-ից 10-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն),
7) «Հայ-ամերիկյան բիզնես կամուրջ» գործարար համաժողով և գործարար հանդիպումներ- դեկտեմբերի 7-ից 13-ը (Լոս Անջելես, Միացյալ Նահանգներ):